

ՎՊՄԻ ԿԵՆՍԱԲԱՆԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2014թ. ՏԱՐԵԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաբանաքիմիական ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը /այսուհետ խորհուրդ/ հաշվետու ժամանակահատվածում աշխատել է նախօրոք հաստատված աշխատանքային պլանով ֆակուլտետի թողարկող մասնագիտական ամբիոնների և ինստիտուտի մյուս ամբիոնների հետ համատեղ: Խորհուրդը համագործակցում է ինստիտուտի բոլոր կառուցվածքային միավորների և օղակների՝ ուսումնական վարչության, պրակտիկայի բաժնի, մշակույթի կենտրոնի, ռազմահայրենասիրական կենտրոնի, ուսանողական խորհրդի, ՈՒԳԸ-ն և մյուսների հետ:

Ֆակուլտետում գործում են ներքոհիշյալ հանձնաժողովները.

- կրթության որակի ապահովման
- բուհ-դպրոց կապի ապահովման
- մասնագիտությունների կրթական ծրագրերի կազմման/Կենսաբանության, Քիմիայի և Դեղագործական քիմիայի, Ֆիզիկական կուլտուրա և սպորտ, Բնապահպանություն և բնօգտագործում/:

Խորհուրդը նիստեր է գումարում ամիսը մեկ հաճախականությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև արտահերթ նիստեր՝ կապված ֆակուլտետում ծագած որոշ խնդիրների լուծման հետ, ինչպես նաև ինստիտուտի ղեկավարության կողմից առաջադրված որոշ հրատապ խնդիրների լուծման հետ: Այսպես՝ պարբերաբար ուսումնամեթոդական խորհուրդը գումարել է նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են մուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության չափորոշիչների դասերը և ֆակուլտետի մասնագիտություններից <Դեղագործական քիմիա>, <Կենսաբանություն>, <Բնապահպանություն և բնօգտագործում>, <Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերը:

Խորհրդում պարբերաբար լսվում են ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպումն ապահովող հարցեր.

- առկա բաժնի ընթացիկ քննությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ,

- առկա և հեռակա բաժինների քննաշրջանների նախապատրաստում և կազմակերպում,

- քննաշրջանի ամփոփումներ,

- կուրսային աշխատանքների բաշխման, պաշտպանության կազմակերպման, ուսանողներին մեթոդական օգնություն ցույց տալու,

- բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական որակավորման աշխատանքների թեմաների հաստատում, նախնական քննարկումների վիճակը ամբիոններում,

- ուսանողների ինքնուրույն, անհատական աշխատանքների բաշխման և ընդունման վիճակը ամբիոններում,

- դասալսումների և քննարկումների վիճակը ամբիոններում,

- լաբորատոր-գործնական աշխատանքների դրվածքը ամբիոններում,

- գիտահետազոտական թեմաների վիճակը ամբիոններում,

- ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման խնդիրները,

- ֆակուլտետի անելիքները միջազգային համագործակցային կապեր հաստատելու ուղղությամբ,

- Մուհ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչների դասերի քննարկում,

- մասնագիտական կրթական ծրագրերի ներկայացում և քննարկում:

Ամբիոնների կողմից վերանայվել են ֆակուլտետի «Կենսաբանության», «Դեղագործական քիմիայի», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Քիմիա» «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունների բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլանները՝ կապված համալսարանական կրթության անցնելու հետ: «Կենսաբանության» և «Քիմիա»-յի մագիստրատուրայի ուսումնական պլանների կազմումը ընթացքի մեջ է: Ամբիոններում գրեթե ավարտվել են ֆակուլտետի մասնագիտությունների մասնագրերի և կրթական ծրագրերի կազմման աշխատանքները, ներկայացվել են

ուսումնամեթոդական վարչություն: Այս պահին ամբիոնների դասախոսները աշխատում են 2015թ. մասնագիտությունների տեղեկագրքերի կազմման վրա:

2014թ. առկա և հեռակա ուսուցման համակարգում ընդունելություն կազմակերպվեց «Կենսաբանության», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Դեղագործական քիմիայի», մասնագիտությունների համար: Ցավով պետք է նշեմ, որ նախորդ տարվա համեմատությամբ <Կենսաբանության> բաժնում ընդունվեցին 6 ուսանողներ, գրեթե 3 անգամ պակաս: Այս փաստը խորհելու տեղիք էտալիս և վկայում, որ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ անելիքները դեռևս շատ են:

Տակուլտետում պարբերաբար հրավիրվում են դեկանատի նիստեր ամբիոնների վարիչների մասնակցությամբ: Դրանցում լսվում են ֆակուլտետում ուսումնական, կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման հետ առնչվող հարցեր, կատարվում են դասալսումների քննարկումներ, ուսանողների և աշխատողների աշխատանքային կարգապահության հարցեր, ռեկտորատում քննարկված հարցերը անմիջապես լուսաբանվում են դեկանատի նիստերում, ամբիոնների վարիչները տեղեկացված են լինում տրվող հրահանգներին, հանձնարարականներին:

Տակուլտետում դասալսումներ են անց կացվում հատկապես երիտասարդ դասախոսների մոտ՝ մեթոդական, կազմակերպչական օգնություն ցույց տալու նպատակով: Ամբիոններում կան դասալսումների մատյաններ, որտեղ կատարվում են գրանցումներ, դիտողություններ: Երբեմն կատարվում են նաև միջամբիոնային դասալսումներ՝ փորձի փոխանակման նպատակով: Դասալսումների հաճախականությունը բարձրացնելով, հաճախակի քննարկումներ կազմակերպելու միջոցով կարելի է վերացնել դասավանդման ժամանակ նկատվող թերությունները:

Տակուլտետի «Կենսաբանության» և «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժնի ուսանողները իրենց արտադրական պրակտիկան անց են կացնում քաղաքի թիվ 1, 3, 10, 22 դպրոցներում: <Դեղագործական քիմիա> մասնագիտության ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացնում Վանաձորի պետական բժշկական քոլեջում: Ժամանակին կազմվել են բոլոր առարկաներից անց կացվող ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը: Դրանք քննարկվել են ամբիոնների նիստերում և հաստատվել ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի

նիստերում: Կապված համալսարանական կրթության անցնելու հետ փոփոխություններ են կատարվել նաև պրակտիկաների ծրագրերում:

Քննարկվել է բուհ-դպրոց կապի ամրապնդման աշխատանքային պլանը: 2014թ. Կենսաբանության ամբիոնի դասախոս Զ.Վարդանյանը <Գենետիկա>-յից բաց դաս է անց կացրել թիվ 10-րդ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների համար: ՎՊՀ-ի հենակետային վարժարանի, թիվ 11-րդ դպրոցի 10-12-րդ դասարանների աշակերտները այցելել են կենսաբանության և քիմիայի լաբորատորիաներ, ինչպես նաև բնագիտական համալիր լաբորատորիա՝ լաբորատոր փորձեր կատարելու համար(Նկ.1):



Նկար 1. Թիվ 11-րդ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները Ֆիզիոլոգիայի լաբորատորիայում փորձի կատարման ժամանակ

Անելիքներ ունենք լաբորատորիաների հարստացման ուղղությամբ: Որոշ ռեակտիվների բացակայության և դժվար ձեռք բերվելու պատճառով լաբորատորիայի հնարավորությունները լրիվությամբ չեն օգտագործվում: Թիվ 67 և 45 կաբինետներում պրոյեկտորի առկայությունը հնարավոր է դարձնում դասապրոցեսների անցկացումը պրեզենտացիաներով, ուսումնական նյութի մատուցումը նոր տեխնոլոգիաներով:

Մի քանի խոսք ամբիոնների գիտական ներուժի մասին: Ֆակուլտետում դասախոսում են 3 դոկտորներ, որոնցից երկուսը պրոֆեսորներ են, իսկ նրանցից մեկը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ; 16-ը՝ դոցենտներ, 18-ը՝ գիտության թեկնածուներ: 2014 թ. թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանեցին կենսաբանության ամբիոնի դասախոսներ Ս.Զալինյանը և Ա.Թումանյանը՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ռ.Եդոյանը ՀՀ ԳԱԱ Երևանի պետական ագրարային համալսարանի մասնագիտական խորհրդի անդամ է, Հ.Ղազարյանը Երևանի ճարտարագիտական համալսարանի, իսկ Զ.Վարդանյանը ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի <Էկոլոգիա> մասնագիտության մասնագիտական խորհրդի անդամ: 2014թ. թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս է եղել Ռ. Եդոյանը, Զ.Վարդանյանը: Քիմիայի ամբիոնի կողմից 2014 թ. Մասնագիտական որակավորման քննություն է ընդունել 2 հայցորդներից: Նույն ամբիոնի հայցորդ դասախոս Ա.Ղազարյանը հաջողությամբ անցել է <Կոմպլեքսագոյացումը կենսամետաղ-կենսալիզանտ ՄԱՆ համակարգում ջրային միջավայրում> թեկնածուական ատենախոսության նախապաշտպանությունը:

2013-14թ. Կենսաբանության ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են՝ 13 հոդվածներ և մեկ գիրք, Քիմիայի ամբիոնում՝ : 2014 թ. տպագրվել են ներքոհիշյալ ձեռնարկները.

-Ս.Բաղդասարյան <Գեոէկոլոգիայի հիմունքներ> (Դասընթացի դասախոսությունների նյութեր), Ուսումնամեթոդական աշխատանք բուհերի ուսանողների համար, Երևան-2014թ.

Տպագրության է երաշխավորվել Վ.Աբովյան, Ա.Լոքյան <Բժշկագիտության հիմունքներ> առարկայի գործնական պարապմունքների համար նախատեսված <Առաջին մինչբժշկական օգնություն> մեթոդական ուղեցույցը:

Ֆակուլտետի դասախոսները ղեկավարել են ուսանողների գիտական ընթերցումները, որոնք զեկուցվել են ներինստիտուտային և միջբուհական հանրապետական գիտաժողովներում: Ֆակուլտետում կենսաբանաքիմիական ֆակուլտետի < Բաց դռների շաբաթ >-ի շրջանակներում կազմակերպվել են ուսանողական գիտական ընթերցումներ:



<Կենսաբանության> մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
Ա.Ասլանյանը ՈԻԳԸ-ն ընթերցման ժամանակ

Խորհուրդը լսել է նաև ֆակուլտետում հակակոռուպցիոն միջոցառումների կազմակերպման վիճակը կապված կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հետ: Ամբիոնները ևս քննարկել են հարցը նիստերում և ընդունել որոշում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման համար: Այդ նպատակով գրեթե բոլոր ընթացիկ քննությունների հարցատոմսերում ընդգրկված են թեստեր, որոնք օգնում են ուսանողին հաղթահարելու դրական գնահատականի շեմը, իսկ հարցատոմսի տեսական հարցերը նախատեսված են բարձր գնահատական ակնկալող ուսանողների համար: Ամբիոններն ունեն գրաֆիկ չառաջադիմող ուսանողների հետ աշխատանքների ակտիվացման համար, կազմակերպում են խորհրդատվություններ կուրսային, ավարտական աշխատանքների կատարման համար:

Բավականին կանոնակարգված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների բաշխումը: Յուրաքանչյուր առարկայից հանձնվում է 2 կամ 3 ինքնուրույն աշխատանք, որի գնահատականը գրանցվում է մատյանի մեջ: Ուրախությամբ պետք է նշել, որ գնալով ավելանում է այն դասախոսների քանակը, ովքեր ինքնուրույն աշխատանքներ են ընդունում ուսանողներից պրեզենտացիաների տեսքով:

Ֆակուլտետում գործում է մեկ ակումբ «Երիտասարդ բնապահպանների ակումբ», որի անդամներն ու կամավորները ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների տարբեր կուրսերի ուսանողներ են: Ակումբի աշխատանքները կազմակերպվում են կամավորական սկզբունքներով: Ակումբի անդամները Բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի դոցենտ Լ.Բայրամյանի ղեկավարությամբ անց են կացնում բնապահպանական բնույթի միջոցառումներ:

2014 թ. մայիսին ֆակուլտետի հեռակա բաժնում ամփոփիչ ատեստավորման քննություններ են հանձնել 81 ուսանողներ:

1. «Կենսաբանություն» մասնագիտությամբ 18 ուսանող
2. «Դեղագործական քիմիա» 18 ուսանող
3. «Բնապահպանություն» 21 ուսանող
4. «Ֆիզ.կուլտ և սպորտ» 24 ուսանող

81 ուսանողներից դրական գնահատական ստացել և բուհն ավարտել են 51 ուսանողներ, դրանցից 30-ը չեն ավարտել բուհը:

2014 թ. մայիսին ֆակուլտետի առկա բաժնում ամփոփիչ ատեստավորման քննություններ են հանձնել 45 ուսանողներ:

1. «Կենսաբանություն» մասնագիտությամբ 17 ուսանող

2.«Դեղագործական քիմիա»18 ուսանող

3.«Ֆիզ.կուլտ և սպորտ» 10 ուսանող:

45 ուսանողներից դրական գնահատական ստացել և բուհն ավարտել են 36 ուսանողներ, դրանցից 9-ը չեն ավարտել բուհը:

Մեծածավալ աշխատանք է կատարվել 2011-12 ուս. տարվա առկա և հեռակա շրջանավարտ կուրսերի պետական քննությունները հաջող կազմակերպելու համար: Ժամանակին պետական քննությունների հարցաշարերը տրամադրվել են ուսանողներին, իսկ մեկ օրինակ՝ ինստիտուտի գրադարանին: Պատրաստվել են քննական հարցատոմսերը բոլոր քննական առարկաներից: Նախօրոք կազմակերպվել և անց են կացվել ակնարկային դասախոսություններ և կոնսուլտացիաներ: 2013-2014 ուս. տարվա երկու կիսամյակների ընթացքում կազմակերպվել է հատուկ մասնագիտական սեմինար դասընթաց 22-ական ժամաքանակով, որի ընթացքում ուսանողների հետ պարապել են ավարտական քննության հարցաշարով: Ցավով պետք է նշեմ, որ այդքան աշխատանք կատարելուց հետո էլ եղան ուսանողներ, որոնք չհաղթահարեցին քննությունը և չավարտեցին բուհը: Առկա ուսուցման համակարգում 9-ը, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 30 ուսանողներ չավարտեցին բուհը: Անելիքները բավականին շատ են, որովհետև այդքան մեծ թիվը խորհելու տեղիք է տալիս:

«Կենսաբանության» և «Քիմիայի» բակալավրի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքով փորձարարական աշխատանքների կատարումը և վերլուծությունը նույնիսկ որակապես գերազանցում է մայրաքաղաքային որոշ բուհերի ավարտական աշխատանքներին:

Պետական քննական հանձնաժողովում ընդգրկվել են քաղաքի դպրոցներից ճանաչված ուսուցիչներ, տարբեր գործատուներ (մասնավորապես, հանձնաժողովի անդամ են եղել հանրակրթական և մարզադպրոցների տնօրեններ, ուսուցիչներ բժիշկներ Զինվորական կայազորային հոսպիտալից և Վանաձորի պետական բժշկական քոլեջից):

Առկա ուսուցման համակարգից հաշվետու տարում հեռացվել են.

- Անահիտ Մաթևոսյանը-Կենսաբանության 1-ին կուրս՝ ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով (14 կրեդիտ պարտք Հրաման՝ 11.03.2014թ. 169 Ա/ՈԻ),
Սվետլանա Ասատրյանը – դեղագործական քիմիա բաժնի 3-րդ կուրս՝ պայմանագրային պարտականությունները չկատարելու և անհարգելի բացակայությունների պատճառով(Հրաման 01.04.2014թ. 207 Ա/ՈԻ),

-Կարինե Ադամյանը Կենսաբանության մագիստրատուրայի բաժնի 1-ին կուրս ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով (Հրաման՝ 01.04.2014թ. 207 Ա/ՈԻ):

Հեռակա ուսուցման համակարգից հաշվետու տարում հեռացվել են.

-Կիրակոսյան Սարգիս – բնապահպ. Հեռակա 5-րդ կուրս, պայմանագրային պարտականությունները չկատարելու պատճառով: Հրաման՝ 01.04.2014թ. հրաման՝ 207Ա/Ու

-Գալինյան Գևորգ - <Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտության 1-ին կուրսի ուսանող, քննաշրջանին և պարտքերի մարման երկու շրջաններին չներկայանալու պատճառով, Հրաման՝ 22.01.2014 թիվ 56 Ա/Ու

-Վարդանյան Սաթենիկ - <Դեղագործական քիմիա> 4-րդ կուրս, Հրաման՝ 24.01.2014թ. թիվ 75 Ա/Ու (Հրաման՝ 07.02.2014 99Ա/Ու՝ պայմանագրային պարտականությունները չկատարելու պատճառով

-Մուրադյան Դավիթ- Բնապահպանություն և բնօգտագործում 5-րդ կուրս, արտադրական պրակտիկային և ուսումնաքննաշրջանին անհարգելի չներկայանալու պատճառով), Հրաման՝ 12.03.2014թ. թիվ 170 Ա/Ու

-Խաչատրյան Անի - <Դեղագործական քիմիա> 4-րդ կուրս, ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով, Հրաման՝ 01.04.2014թ. հրաման՝ 207Ա/Ու

-Սահակյան Տաթևիկ – ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով, Հրաման՝ 10.06.2014թ. թիվ 318 Ա/ՈԻ

Մալխասյան Հասմիկ քննաշրջանին չներկայանալու պատճառով, Հրաման՝ 01.04.2014թ. հրաման՝ 207Ա/Ու:

2011-12 ուս տարում, երբ առաջին անգամ թույլատրվեց ուսանողներին կուրսից կուրս փոխադրել մինչև 12 կրեդիտ պարտքով, պարտքով հաջորդ կուրս

փոխադրված ուսանողների քանակը 9-ն էր, իսկ 2014թ. այդ թիվը հասնում է 21-ի: Մի կողմից լավ է, որ ուսանողը հանձնելու հնարավորություն ունի և բուհից դուրս չի մնում, բայց մյուս կողմից էլ դա ծույլ և անպարտաճանաչ ուսանողներին կրթությունը շարունակելու հնարավորություն է տալիս:

Թեպետ նախորդ տարիների համեմատությամբ ակտիվացել է խորհրդատուների աշխատանքը(մշտապես հսկողության տակ են պահում մատյանները, ժամանակին հաշվառում են ուսանողների հարգելի և անհարգելի բացակայությունները, յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կազմակերպում են միջոցառումներ կուրսի ուսանողների հետ), այնուամենայնիվ խորհրդատուների աշխատանքի ակտիվացման ուղղությամբ բավականին շատ անելիքներ կան: Դեղագործական քիմիայի 2-րդ կուրսի խորհրդատու Է.Խաչատրյանը խորհրդատվական ժամի ընթացքում անցկացրեց հանդիպում Մ.Վիրաբյանի հետ բուհի և մասնագիտությունների հավատարմագրման ուղղությամբ կատարվող աշխատանքներին ծանոթացնելու համար: Կենսաբանության 2-րդ կուրսի ուսանողները խորհրդատուի՝ Ա.Գևորգյանի ղեկավարությամբ կազմակերպեցին միջոցառում նվիրված Հայրենական պատերազմում և Ղարաբաղյան պատերազմում տարած հայերի հաղթանակին:

2014թ. ֆակուլտետում կազմակերպվեց միջոցառում <Մենք քայլում ենք Ձեր արահետներով> խորագրով նվիրված ֆակուլտետի այն դասախոսներին և աշխատակիցներին, ովքեր այլևս չեն աշխատում, բայց մեծ ներդրում են ունեցել ֆակուլտետի աշխատանքների կազմակերպման

համար:



<Մենք քայլում ենք Ձեր արահետներով> միջոցառումից մի դրվագ

2014թ. հոկտեմբերի 9-11-ը տեղի ունեցավ Քիմիկոսների միջազգային կոնֆերանս Քիմիայի ամբիոնի նախաձեռնությամբ: **նյութ ավելացնել**

2014թ. արդեն հինգերորդ անգամ ֆակուլտետում ձեռնարկվել է միջոցառումների շարք «Կենսաբանաքիմիական ֆակուլտետի բաց դռների շաբաթ», որն անցկացվեց նոյեմբերի 24-27:

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն



Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Կենսաբանաքիմիական ֆակուլտետ



Բաց դռների շաբաթ

2014թ.

Շրագիր

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

կենսաբանաքիմիական
ֆակուլտետում տեղի ունեցող

«ԲԱՅ ԳՈՆԵՐԻ ԵԱԲԱԹ»-ին,

որը տեղի կունենա
ա/թ նոյեմբերի 24-28-ը
(ՎՊՀ 45 լսարան):

24 նոյեմբերի, ժամը 14⁰⁰
«Կենսաբանաքիմիական ֆակուլտետի
շաբաթ» միջոցառումների շարքի բացում

24 նոյեմբերի, ժամը 15⁰⁰
«Բնապահպանական ակցիա»

25 նոյեմբերի ժամը 14⁰⁰
ՈՒԳՀ (գիտընթերցանություն)

26 նոյեմբերի,
ժամը 9⁰⁰
Բաց դաս լսողներինից
ժամը 14⁰⁰
«Սուրճի ազդեցությունը մարդու օրգանիզմի
վրա»

27 նոյեմբերի, ժամը 14⁰⁰
«Ականավոր գիտնականներ շարքի»-
Լուի Պատյոյր
Էբոլայի վիրուս
Գրիպի վիրուս

28 նոյեմբերի
Դպրոցական օլիմպիադա
(քիմիա, կենսաբանություն ատարկաներից)

Միտով սպասում ենք
կենսաբանաքիմիական ֆակուլտետ

Միջոցառումը դարձել է ավանդական: Հինգ օր անընդմեջ ֆակուլտետում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ.

- բաց դաս <Լատիներեն> առարկայից (դեղագործական քիմիա 1-ին կուրս, դասխոս Ա.Լոքյան),
- ուսանողական գիտական ընթերցումներ(կազմակերպիչ ՌԻԳԸ նախագահ Շ. Քառյան): Կոնֆերանսի ընթացքում լսվել են թվով 6 ուսանողների գիտական ընթերցումներ, որոնցից մեկն ուներ փիլիսոփայական-բնագիտական, մեկը՝ բուսաբանական, իսկ 4-ը՝ ֆիզիոլոգիական ուղղվածություն:
- սուրճի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա (կազմակերպող կենսաբանության մասնագիտության 1-ին կուրս)
- <Ականավոր գիտնականներ> շարքից Լուի Պաստյորին նվիրված միջոցառում, որի ընթացքում կենսաբանության 3-րդ կուրսի ուսանողների կողմից ներկայացվեց ականավոր գիտնականի կյանքն ու կենսագործունեությունը, ընթերցվեցին երկու ընթերցումներ Էբոլայի և Գրիպի հարուցիչների մասին:
- Դպրոցականների առարկայական օլիմպիադա <Կենսաբանություն> և <Քիմիա> առարկաներից:

Մի փոքր ավելի մանրամասն տեղեկություն օլիմպիադայի մասին: Նախապես մարզի բոլոր դպրոցներ ուղարկվել էր հայտարարություն օլիմպիադայի մասին: Մինչև օլիմպիադայի օրը դպրոցները նախապես ներկայացրել էին մասնակցության հայտ աշակերտների անուն ազգանուններով: Համալսարանի Մերգեյան կենտրոնում ուսումնամեթոդական վարչության ծրագրավորողի կողմից մուտքագրվել և կողավորվել էին աշակերտների ազգանունները: Աշակերտի աշխատանքի ավարտից անմիջապես հետո համակարգիչը կգնահատի աշակերտի աշխատանքը: Օլիմպիադայի օրը բուհ էին ներկայացել մարզի տարբեր շրջաններից աշակերտներ, որոնք նախապես հայտագրված չէին: Նման աշակերտների հետ կազմակերպվեց ստուգում գրավոր տարբերակով: <Կենսաբանության> օլիմպիադային մասնակցել են 88 աշակերտներ, իսկ <Քիմիայի> օլիմպիադային՝ 65 աշակերտներ: Օլիմպիդան անց է կացվել երկու փուլով՝ տեսական և գործնական: Օլիմպիադայի տեսական փուլի ավարտից 30 րոպե հետո առարկայական հարցաշարերը իրենց պատասխաններով տեղադրվել են ֆակուլտետի Fase book-յան էջում: Գործնական փուլը անց է կացվել համալսարանի համապատասխան լաբորատորիաներում: Նախատեսված են եղել

դպրոցական ծրագրին համապատասխան լաբորատոր աշխատանքներ: <Կենսաբանություն> առարկայից վեց լաբորատոր աշխատանքներ, իսկ <Քիմիա> առարկայից՝ չորս աշխատանք: Օլիմպիադայի գործնական փուլի ավարտից հետո պարզ դարձավ, որ <Կենսաբանություն> առարկայից 6 աշակերտներ կսատանան 1-3-րդ կարգի դիպլոմներ և 7 աշակերտ գովասանագիր խոր գիտելիքներ ցույց տալու համար: <Քիմիա> առարկայից 1-3-րդ կարգի դիպլոմներ ստացան 13 աշակերտներ և խրախուսվեցին 7 աշակերտներ: Դեկտեմբերի 8-ին կատարվեց պարզների հանձնում: Ինչպես և պետք էր սպասել մրցանակային տեղերը հիմնականում զբաղեցրեցին <Էվրիկա> վարժարանի սաները: Դիպլոմների և խրախուսագրերի հետ միասին հաղթողներին տրվեցին գրքեր, գրիչներ և նոթատետրեր համալսարանի լոգոյով:

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել Գործնական աշխատանքի դաս թիվ 10 և 11-րդ դպրոցի աշակերտների համար:

Ֆակուլտետի որոշ դասախոսներ ընդգրկված են համալսարանի կողմից իրականացվող ծրագրերի մեջ:

ԿևՖ ամբիոնի դասախոս Ա.Գևորգյանը, Բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի դասախոս Ն.Ասատրյանը մասնակցել են Երևանում տեղի ունեցած ՌԴ-ի «Աջակցություն կրթությանը՝ հանուն զարգացման» հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում Համաաշխարհային բանկի ապագա մանկավարժների պատրաստման դասընթացներին: Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերի շուրջ Ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Գևորգյանը ելույթ է ունեցել ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստում:

Կենսաբանության ամբիոնի դասախոս Զ.Վարդանյանը ընդգրկված է Veritas ծրագրի մեջ: Ենթադրվում է, որ այդ ծրագրի շրջանակներում կկազմակերպվի ասպիրանտական դասընթաց Բնապահպանությունից: 2014թ. Հունիսին Երևանում Մ.Հերացու անվան համալսարանում Veritas ծրագրի շրջանակներում Զ.Վարդանյանը ներկայացրեց ֆակուլտետի կատարած աշխատանքները Բնապահպանության բնագավառում: Կարծում եմ, որ ծրագրի շարունակության դեպքում այդ գործընթացը բավականին դրական տեղաշարժեր կառաջացնի ֆակուլտետում:

Ցավով պետք է նշեմ, որ 2014թ. Համալսարանում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ՝ իրավիճակից ելնելով, որի արդյուքնում ֆակուլտետի երկքու ամբիոններ լուծարվեցին: <Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ> ամբիոնը միացավ <Ընդհանուր ֆիզիկական դաստիարակություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր> ամբիոնին: Նոր ամբիոնը վերանվանվեց < ֆիզիկական դաստիարակություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր >

Ֆակուլտետի գործունեության մեջ կան ուժեղ և թույլ կողմեր:

Ուժեղ կողմերը

- Մրցունակության բարձր մակարդակը տարածաշրջանում:
- համալսարանում ձևավորված ակադեմիական ավանդույթներին մասնակցությունը:
- Նյութատեխնիկական բազայի որոշակի մակարդակը:
- Գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող դասախոսների բավարար մակարդակը:
- Բարեփոխումների գործընթացում ընդգրկվող աշխատակիցների թվի նկատվող աճը:

Թույլ կողմերը

- Ուսանողների թվաքանակի նվազումը:
- Այլ կազմակերպությունների հետ կիրառական բնույթի արդիական գիտական թեմաների կատարման գործում աշխատակիցների ներուժի թույլ օգտագործումը:
- Խնդիր է սեփական մարզադահլիճ ունենալը: Չնայած, այսօր այդ խնդիրը լուծվում է վարձակալության հիմունքներով, այնուամենայնիվ շատ ավելի արդյունավետ կլիներ դասապրոցեսի անցկացումը սեփական մարզադահլիճում:
- Ֆինանսավորվող գրանտային ծրագրերի բացակայությունը ֆակուլտետում:
- Ուսանողների և դասախոսների միջազգային շարժման բացակայությունը:

ԴԵԿԱՆ

03.12.2014թ.

Զ.Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ